

ՄԱԿԻՐՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԽՈՍՔՈՒՄ

Ա.Ա. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Վահան Տերյանի՝ այդ նուրբ ու ինքնատիպ քնարերգուի թախծոտ ու քնքուշ բանաստեղծությունները, հյուսված մարդկային հոգու ամենամուրբ ապրումներից, դեղնաշող աշնան ու «նրբակերտ մթնշաղի» մեղմ գույներից, արդեն յոթ տասնամյակից ավելի է, որ ջերմացնում են մեզ: Ո՞րն է նրա ստեղծագործության այդ տեսական հմայքի գաղտնիքը: Մեր կարծիքով ինքնաբացահայտման արտասովոր ու բացառիկ անկեղծությունը: Նա ուղղակի մերկ անկեղծությամբ բացում է մարդկանց առջեւ իր հոգու ամենամաքիմ ապրումները, ցրում «լուսավոր գանձեր», լույս ու ջերմություն:

Տերյանի մուտքը գրականության մեջ իրական հայտնություն եղավ, քանի որ նա սկիզբ դրեց հայ քնարերգության մեջ մի նոր շրջանի՝ շատ կողմերով պայմանավորելով նրա հետագա զարգացման ընթացքի ուղիները:

Առաջին իսկ ժողովածուով՝ «Մթնշաղի անուրջներով», Տերյանը գլխավորեց հայ քնարերգությունը՝ միշտ մնալով իբրեւ «կատար, բարձունք»: Իր մեծ նախորդի՝ Ավ. Իսահակյանի պնդումով «Տերյանը մի նոր գույնով երգեց եւ՝ սերը, եւ՝ հայրենիքը, եւ՝ բնությունը: Նա թարմացրեց հայ պոեզիայի եւ՝ նյութը, եւ՝ լեզուն»:

Տերյանը, իրոք, սրտի բանաստեղծ է. նրա սրտահույզ երգերը, զգացմունքների խորությամբ եւ իրենց լուսավոր թախծով ու մարդասիրական տրամադրություններով այսօր էլ վարակում են ընթերցողին:

Ինչպես հայտնի է, քնարերգությունն իր ձեւով սուբյեկտիվ ժանր է, եւ նրանում իրականությունն արտացոլվում է բանաստեղծի անձնական տպավորությունների, հույզերի նկարագրության միջոցով: Իսկ դա ինքնին ենթադրում է, որ քնարերգության մեջ անպայմանորեն դրսևորվում են նաեւ բանաստեղծի անձնական ապրումներն ու տրամադրությունները: Դա առավելապես վերաբերվում է «մաքուր քնարերգու» Վահան Տերյանին: Ով ծանոթ է բանաստեղծի Անթռանա Սիսկարյանին գրած նամակներին, նկատած կլինի, թե ինչպիսի ուղղակի, անմիջական կապ գոյություն ունի Տերյանի քնարերգության, նրա բանաստեղծական տրամադրությունների եւ առօրյա ապրումների միջեւ:

Այս հանգամանքը մենք կարելուք ենք Տերյանի բանաստեղծական խառնվածքի համար, քանի որ դրանով ենք պայմանավորում նրա քնարերգության անմիջականությունն ու հուզականությունը:

Տերյանի առաջին ժողովածուն՝ «Մթնշաղի անուրջները», նորություն էր հայ քնարերգության մեջ՝ հայ բանաստեղծական մտածողության, լեզվի ու պատկերային համակարգի առումով, հատկանիշներ, որ բնորոշ դարձան նրա հետագա շրջանի ստեղծագործություններին:

Պատկերային մտածողության ու լեզվական նյութի ընտրության մեջ դարձյալ ընդգծվում ենք Տերյանի բանաստեղծական խառնվածքը, որ դիպուկ ձեւով բնութագրել է Ավ. Իսահակյանը. «Այս զգայուն հոգում ապրումները մթին խորության մեջ են կատարվում, նա աշխարհն զգում է երազներով ու երազների մեջ» (ընդգծումը մերն է. - Ա.Մ.):

Եվ իրոք, իր բանաստեղծական մտածողությամբ ու աշխարհընկալումով Տերյանը որոշակիորեն տարբերվում էր իր անմիջական նախորդներից՝ Զ. Յովհաննիսյանից, Զ. Թումանյանից, Ավ. Իսահակյանից: Միանգամայն ճիշտ է նկատում անվանի գրականագետ Էդ. Ջրբաշյանը, որ իր նախորդների համեմատությամբ «Տերյանի բանաստեղծություններում ավելի քիչ են իրական կյանքի շոշափելի գույներն ու գծերը: Նրանց փոխարեն մեծանում է անրջային- անիրական, առարկայական կոնկրետություններից զուրկ պատկերների դերն ու կշիռը...»

Ինչպես բնության եւ առարկայական աշխարհի տեսարանները, այնպես էլ մանավանդ բանաստեղծի երազների ու ռոմանտիկ մոլորների աղբյուր դարձած կինը «հրաշք- աղջիկը», կարծես ոչ այնքան իրական երեւույթներ են, որքան յուրօրինակ խորհրդանիշներ կերտված կենսական տպավորությունների, երեւակայության եւ անրջանքի բարդ միախառնման ճանապարհով»:

Տերյանի գեղարվեստական մտածողության այդ առանձնահատկության շնորհիվ էլ տերյանական պատկերներն ու բանաստեղծական խոսքը հասնում են բացառիկ նրբության, ստանում հուզական լիցք, դառնում թեթեւ ու խաղացկուն:

Ասվածից թող այն տպավորությունը չստացվի, թե արտակարգ նրբագեղության ու թափանցիկության

հասնող, իր ձեւերի մեջ գրեթե անթերի տերյանական երգը զուրկ է կենսական հիմքերից: Ընդհակառակն, նրա թախծոտ տրամադրությունների հիմքն առօրյա ապրումներն են, դաժան իրականության արձագանքները մարդկային հոգու ծալքերում:

Այդ անշող իրականությունից էլ ծնվում են բանաստեղծի նրբին ապրումները, նրա ցավն ու կարոտը: Վերը բերված մեջբերումը ճշմարտացի կերպով բնութագրում է Տերյանի գեղարվեստական մտածողությունը: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ բառընտրության, լեզվական միջոցների գործածության հիմքում ընկած է նրա բանաստեղծական մտածողության այդ յուրահատկությունը: Ավելին, դրանով են պայմանավորվում ոչ միայն Տերյանի բանաստեղծությունների տրամադրությունները, այլեւ՝ լեզվական արվեստն ու պատկերային համակարգը: Այնպես որ Տերյանի լեզվական արվեստի հարցերով զբաղվողը չի կարող անտեսել այս կարեւոր հանգամանքը, քանի որ լեզվաբանական հաշվապահությամբ հնարավոր չէ բացահայտել Տերյանի բառագործածության օրինաչափությունները, յուրաքանչյուր բառ ու արտահայտություն նրա բանաստեղծական խոսքում ենթարկվում է բանաստեղծության ընդհանուր տրամադրությանն ու ոճին, գեղագիտական արժեք է ստանում բանաստեղծում, ավելին՝ բանաստեղծության ընդհանուր հյուսվածքում: Իսկ Տերյանը մի բանաստեղծ է, որի ոչ միայն առանձին բանաստեղծությունները, այլեւ բանաստեղծական շարքերը ենթարկվում են նրա ընդհանուր տրամադրություններին: Գրականագիտության մեջ նկատված է, որ Տերյանն է մեր պոեզիայում կիրառել բանաստեղծական շարքերի սկզբունքը: Նա ոչ միայն ստեղծագործում էր առանձին բանաստեղծություններով, այլեւ՝ բանաստեղծական որոշակի շարքերի միջոցով, եւ դա նրա գեղարվեստական մտածողության ամենավառ արտահայտություններից մեկն է:

Մեր նպատակից դուրս է Տերյանի լեզվական արվեստի ամբողջական քննությունը: Սույն հոդվածում մեր նպատակն է խոսել միայն գեղաբանական մակադրությունների մասին³, բացահայտել դրանց գեղարվեստական արժեքն ու դերը Տերյանի բանաստեղծական խոսքում:

Տերյանի բանաստեղծական խոսքին առանձնահատուկ պատկերավորություն եւ հուզականություն են հաղորդում գեղարվեստական մակադրությունները, որոնց մեջ եւս ցայտուն ձեւով դրսևորվել են նրա բանաստեղծական խառնվածքի բնորոշ գծերը, գեղարվեստական մտածողության ու ոճի ինքնատիպությունը:

Սակայն Տերյանի բանաստեղծություններում գործածված մակդիրների մասին խոսելիս մենք չենք կարող սահմանափակվել մակդիրի ընդունված կամ տրադիցիոն ըմբռնումով, քանի որ բանաստեղծն ընդլայնում է պատկերավորման այդ միջոցի արտահայտչական հնարավորությունները եւ իր գեղարվեստական մտածողությամբ պայմանավորված՝ այն դարձնում հույզերի եւ ապրումների դրսևորման հիմնական միջոցներ:

Հայտնի է, որ մակդիրները գեղարվեստական խոսքում ունեն առարկան կամ երեւույթը հեղինակային վերաբերմունքով գնահատող ու բնութագրող դեր: Գեղարվեստական-ոճական արժեք ունեցող մակդիրների մեջ հիմնականն ու էականը հեղինակային վերաբերմունքն ու գնահատականն է, բանաստեղծի երեւակայությամբ ու նրա ընկալումով ստեղծված այն հատկանիշները, որոնք նրա դիտակետով դառնում են ամենաէականը խոսքային տվյալ միջավայրի համար: Նայած թե բանաստեղծը նկարագրվող առարկայի, երեւույթի որ կողմերն է համարում էականը, հիմնականը, ինչ նոր հատկանիշներ է նկատում, հայտնաբերում, ըստ այդմ էլ ընտրում է համապատասխան մակդիրներ կամ ստեղծում մակդիրային նոր կապակցություններ: Իսկ երբ խոսք է գնում Տերյանի գործածած մակդիրների կամ մակդիրային կապակցությունների մասին, մենք չենք կարող բավարարվել միայն առարկաներն ու երեւույթները բնութագրելու հատկանիշով (թեպետ չի բացառվում այդ կարգի մակդիրների գործածությունը Տերյանի բանաստեղծական խոսքում):

Այս դեպքում կարելուք է դառնում *բանաստեղծի կամ նրա քնարական հերոսի հույզերի, ապրումների դրսևորումը մակդիրային կապակցությունների եւ գեղարվեստական մակադրությունների կամ դրանց միախառնման միջոցով*:

Տերյանի բանաստեղծական խոսքի պատկերային համակարգի մեջ կարելուք դեր ունեն գեղարվեստական մակադրությունները, եւ դրանք բանաստեղծությանը հուզական լիցք հաղորդող հիմնական տարրեր են: Կարելի է ասել, որ Տերյանի բանաստեղծական խոսքում զգացմունքային բեռի հիմնական կրողները գեղարվեստական մակադրություններն են:

Որպես քնարերգու բանաստեղծ, Տերյանը խուսափում է մշտական ու նկարագրական մակդիրների գործածությունից: Այդ կարգի մակդիրների սակավաթիվ օրինակներ միայն կարելի է բերել.

*Բարակիրան նաիրուհին ինձ ժպտաց,
Նաիրուհին փխուրայյա եւ համեստ՝ (հ. 1, 238):*

*Նա ուներ խորունկ երկնագույն աչքեր,
Ընքուշ ու տրտում որպես իրիկուն... (հ. 1, 31):*

3 Հր. Թամրազյան, Վահան Տերյան, Ե., 1985, էջ 63-66:

4 Է. Ջրբաշյան, Չորս զագար, Ե., 1982, էջ 190, ինչպես նաեւ փոդարակում փրկված 1-ին ծանոթ. աղբյուրը, էջ 6:

5 «Գեղարվեստական մակադրություններ» գրքի մեջ մենք ուսականում ենք եւ մակդիրները, եւ բայի փոս դրվող, գործողությունը քննարկող լեզվական միջոցները (վերջինները քննարկությունն համընկնում են չեղի պարագայի հետ): Տե՛ս նաեւ մեր «Մակդիրը որպես գեղարվեստական խոսքի պատկերավորման միջոց» հոդվածը (ՀԼԳԴ, 1984, №4):

6 Օրինակները բերվում են Վ. Տերյանի Երկերի ժողովածուի 1960 եւ 61 թվականի հրատարակությունից: Փակագծում նշված են հապտորդ եւ էջը:

1 Տե՛ս Է. Ջրբաշյանի գրած «Վահան Տերյանի պոեզիան» առաջաբանը (Վ. Տերյան, Բանաստեղծություններ, Երևան, 1985, էջ 7):

2 Նույն փոխում էջ 6, ինչպես նաեւ Է. Ջրբաշյան, Չորս զագար, Ե., 1982, էջ 190:

Նկատենք, որ նկարագրական մակդիրներ ավելի շատ են գործածված «Երկիր Նաիրի» շարքում, որտեղ զգալի տեղ են գրավում կյանքի իրական գույները:

*Հայրենիքում իմ արմատներն
Գիշերն իջավ անլույս ու լուռ (հ. 1, 228):*

*Արևուրդներն են համր ու մերկ
Նայում երկինք անգոր ու գուր (հ. 1, 228):*

*Սիրում եմ պարզկա քո լեզուն,
Ձեռներդ մաշված ու քարակ... (հ. 1, 231):*

Տերյանի բանաստեղծական խոսքին բնորոշ է քնարական մակդիրների գործածությունը: Նա հիմնականում գործածում է այնպիսի մակդիրներ, որոնք դրսևորում են քնարական հերոսի հոգեկան ապրումներն ու տրամադրությունները եւ ներդաշնակվում են բանաստեղծության ոճական ընդհանուր հենքին:

Յուրաքանչյուր բառի, առավել եւս մակդիրների իմաստային ու արտահայտչական հնարավորությունները բանաստեղծական խոսքում դրսևորվում են այլ բառերի հետ ունեցած բազմազան ու բազմապիսի կապակցություններում:

Բանաստեղծական տողում բառը հանդես է գալիս ոչ միայն իր նեղ, մասնավոր իմաստով, այլեւ ծեռք է բերում իմաստային զանազան նրբերանգներ՝ ուրիշ բառերի հետ ունեցած կապերի շնորհիվ:

Տերյանի գործածած մակդիրները ենթարկվում են բանաստեղծության իշխող տրամադրությանը, ստանում արտահայտչական նոր երանգներ, որոնց շնորհիվ բանաստեղծական խոսքն ստանում է զգացմունքային հագեցվածություն, հուզականություն եւ նրբագեղություն:

Մեր խոսքը հավաստի դարձնելու համար բերենք մի երկու օրինակ: Ահա Տերյանի հանրահայտ բանաստեղծություններից մեկը («Տխրություն»).

*Սահուն քայլերով աննշմար որպես քնքուշ մութի թել,
Սի ստվեր անցավ ծաղիկ ու կանաչ մեղմիվ շոյելով.
Իրիկնաժամին թվերն օրորող հովի պես րկրեւ
Սի ուրու անցավ. մի գունաւոր աղջիկ ճերմակ շորերով...*

*Արշակ դաշտերի ամայության մեջ նա մեղմ շշնջաց,
Կարծես թե սիրո քնքուշ խոսք ասաց միտհող դաշտերին.
Ծաղիկների մեջ այդ անուրջ կույսի շշուկը մնաց,
Եվ ծաղիկները այդ սուրբ շշուկով իմ սիրտը լցրին...(հ. 1, 11):*

Բերված բանաստեղծության մեջ գործածված յուրաքանչյուր մակդիր, իսկ դրանք բավական շատ են (սահուն քայլեր, քնքուշ մութ, գունատ աղջիկ, ճերմակ շորեր, սիրո քնքուշ խոսք, միտհող դաշտեր, անուրջ կույս), բխում է բանաստեղծության ընդհանուր տրամադրությունից՝ ստեղծելով քնարական հերոսի ամբողջական պատկերը, որ տվյալ դեպքում խորհրդանշում է բանաստեղծի հոգու անմարմին տխրությունը:

Խոսքի հուզականությանը նպաստում է նաեւ այն, որ բանաստեղծը մակդիրների հետ հմտորեն զուգակցել է գործողությունը բնութագրող գեղարվեստական մակադրությունները (մեղմիվ շոյելով, մեղմ շշնջաց):

Կարելի է ասել, որ ոճական այս հնարանը Տերյանի բանաստեղծական խոսքի համար բնորոշ հատկանիշ է. նա հաճախ կողք կողքի զուգահեռաբար գործածում է մակդիրներ ու գործողությունը բնութագրող գեղարվեստական մակադրություններ (Դու մոտեցար մեղմ, համրաբայլ, որպես քնքուշ իրիկվա փայլ, դու մեղմ փայլալիկ սիրտս տարագիր...):

Ուշադրություն դարձնենք այդ կապակցությունների բնույթի վրա՝ մեղմ շոյել, մեղմ շշնջալ, մեղմ փայլալիկ, սիրո քնքուշ խոսք, սահուն քայլեր եւ այլն, որն իր հերթին ստեղծում է տերյանական խոսքի որակը:

Հաճախ Տերյանն իր բանաստեղծական խոսքը կառուցում է համապատասխան տրամադրություն ստեղծող մակդիրային կապակցություններով, որոնք եւ դառնում են քնարական հերոսի ապրումներն արտահայտող, բանաստեղծությանը հուզական լիցք հաղորդող հիմնական տարրեր: Այս առումով բնորոշ է «Աշնան տրտմություն» բանաստեղծությունը, որն ամբողջովին կառուցված է ոճական այդ սկզբունքով.

*Կրկին իմ հոգում
Իջավ մշուշուր, արցունք անջրեւող
Տրտում իրիկում
Իմ սրտում անցավ
Մահացող ծաղկանց բույրը ցավ բերող,
Համբույրը խոնավ,
Կրկին պաղ միգում*

*Ամպուր երկինքը մեռած լույսերի
Թաղումն է սգում:
Հողմը սրարշավ
Հոգուս դալկացած ծաղիկ հույսերի
Թերթերը տարավ...
Անձրեւն անընդհատ
Մաղում է վիհաւր թաղումի կոծով... (հ. 1, 47):*

Թախծալի աշնան, լքվածության, հուսահատության տրամադրություններն արտահայտվում են տրտում իրիկում, մահացող ծաղկանց, մեռած լույսեր, պաղ մեզ, դալկացած ծաղիկներ մակդիրային կապակցությունների միջոցով: Կամ՝

*Դալուկ դաշտեր, մերկ անտառ...
Մահացողի փխուր կյանք,
Անձրեւ, քամի, սեւ կամար...
Մութակտուր հեկեկանք (հ. 1, 13):*

Այստեղ եւս ընդգծված մակդիրներն ստեղծել են դալուկ աշնան, տխրության ու թախծի տրամադրություններ, իսկ սեւ կամար մակդիրային կապակցությունն ավելի է ընդգծում պատկերի մռայլ տպավորությունը:

Տերյանի գործածած յուրաքանչյուր մակդիր բխում է բանաստեղծության բովանդակությունից, դառնում քնարական հերոսի թախծի, անամոք ցավի եւ տխուր տրամադրությունների դրսևորման միջոց.

*Ինձ թաղեք, երբ կարմիր վերջալույսն է մարում,
Երբ փխուր զգվանքով արեգակը մեռնող
Սարերի արծաթե կատարներն է վառում,
Երբ մթնում կորչում են ծով ու հող...
Ինձ թաղեք, երբ փխուր մթնշաղն է իջնում,
Երբ լռում են օրվա աղմուկները զվարթ... (հ. 1, 23):*

Զվարթ աղմուկներ, կարմիր վերջալույս մակդիրային կապակցությունները բուրրովին էլ չեն փոխում բանաստեղծության իշխող տրամադրությունը, քանի որ քնարական հերոսի ապրումները դրսևորվում են տխուր զգվանքով մեռնող արեգակի, տխուր մթնշաղի թախծանուշ պատկերներով, որոնք եւ ստեղծել են համապատասխան հոգեբանական մթնոլորտ:

Երբեմն բանաստեղծը զուգակցում է նկարագրական եւ հուզական մակդիրները՝ վառ ու տպավորիչ դարձնելով նկարագրվող առարկան կամ երեւույթը.

*Մայրս ուներ ձեռներ բարակ,
Մոմն մատներ երկար ու նուրբ,
Մեղմ աչքերում զգվող կրակ
Այնպես բարի եւ այնպես նուրբ...(հ. 2, 192):*

Ընդգծված մակդիրների միջոցով բանաստեղծն արտահայտում է մոր մատների նրբությունը, մայրական աչքերից ճառագող ջերմությունը:

Մոմն մատներ, բարակ ձեռներ նկարագրական մակդիրները, բնական է, տվյալ խոսքային միջավայրից դուրս նույն արտահայտչականությունը չեն ունենա. դրանք հուզական երանգավորում են ստանում այլ բառերի հետ ունեցած կապակցությունների շնորհիվ միայն:

Տերյանի բանաստեղծական խոսքի համար, ինչպես ասվեց, հիմնականը, բնորոշը հուզական մակդիրների գործածությունն է, որոնցով դրսևորվում են քնարական հերոսի զգացմունքների խորհրդավոր աշխարհն ու ամորոշ, թախծոտ տրամադրությունները: Մենք այս հանգամանքն ընդգծում ենք որպես Տերյանի գեղարվեստական մտածողության, նրա ոճի կարեւոր հատկանիշ՝ որովհետեւ հայ պոեզիայում Տերյանի երգն առանձնանում է մարդու ներաշխարհի խոր ընկալումներով, նրա հոգու ներքին շարժման բարդ ու բազմազան ելեւեջների նրբագույն դրսևորումներով:

Բանաստեղծը մարդկային հոգու անտեսանելի ծալքերում հայտնաբերում է նոր գեղեցկություններ, սիրո, ցավի ու պայծառ թախծի նուրբ մեղեդիներ: Հույզը, քնարական ապրումը դառնում է մարդու հոգեկան աշխարհի արտացոլման պատկերը: Ահա Տերյանի բանաստեղծական խոսքի ամենաբնորոշ օրինակներից մեկը, որտեղ առարկայական աշխարհի գրեթե անշոշափելի պատկերներին՝ ներդաշնակ դրսևորվում են քնարական հերոսի հույզերն ու ապրումները.

*Թովիչ քնքշությամբ հանգչող աշխարհում
Երեկոն վառեց լույսեր դժգունակ*

Մութը հյուսուում է փոքրամոքյան ժանյակ,
Ծաղիկներն անուշ բույր են բուրվառում.
- Իմ սիրտը տրտում, իմ սիրտը մեմակ:
Մեմակ լուսնյակը, մեմակ ու աղոտ
Ափռում է շուրջը իր շողերը ցուրտ.
Չետո լռում է մի փխուր խորհուրդ,
Վառվում է հավետ մի անանգ կարոտ...(հ. 1, 32):

Թուփիչ քնքշություն, հանգչող աշխարհ, դժգոհման լույսեր, տրտմության ժանյակ, անուշ բույր, ցուրտ շողեր, տխուր խորհուրդ մակդիրային կապակցությունները բանաստեղծությանը հաղորդել են արտակարգ նրբագեղություն, մեղմ երանգներ, ստեղծել ջերմ ու հարազատ մթնոլորտ:

Տերյանը խուսափում է առօրեական, առարկայական կոնկրետություն ունեցող մակդիրների գործածությունից եւ միշտ նախընտրում է մարդու հոգեկան ապրումներն ու զգացական աշխարհը բնութագրող եւ արտահայտող մակդիրները: «Մթնշաղի անուրջներում» կատարված լեզվաոճական փոփոխությունները մեր մտքի հաստատումն են: Տերյանի պոեզիային ծանոթ մարդը դժվար թե հավատա, որ «Փաթաթեցիր ինձ մազերով քո երկար» տողը նրանն է (վերամշակված տարբերակում՝ Ոսկե բոցով լցրիր հոգին իմ տկար):

Երբեմն նույնիսկ մի մակդիրի փոփոխությունը փոխում է ամբողջ բանաստեղծության տրամադրությունը, ստեղծում Տերյանի բանաստեղծական խոսքին բնորոշ սահունություն, երաժշտականություն:

*Եթե հեռվում ճակատագիրն անհոգի
Սիրտդ մատնե չմեռնաշունչ տանջանքի...*

Ինչքան բան է փոխել ընդգծված մակդիրի փոխարինումը անկարեկից բառով՝ անկարեկից տանջանքի... Տերյանի գործածած մակդիրային կապակցությունների սոսկ թվարկումն իսկ ցույց է տալիս, թե բանաստեղծն ինչպիսի նրբություն է ցուցաբերում մակդիրների ընտրության եւ գործածության հարցում՝ դրանք դարձնելով ոչ միայն քնարական հերոսի հույզերի եւ ապրումների դրսևորման, այլև՝ երաժշտականություն եւ հնչյունային ներդաշնակավորում ստեղծելու միջոց: Ահա այդպիսի բնորոշ մի շարք կապակցություններ. լույս ասողեր, մահացող ծաղկանց, խավար թախիծ, անմխիթար մորմոքում, կուսական տենչ, վիատ խոսքեր, թախծոտ սեր, լուսեղեն մեմություն, տխրաբոց հուր, կուսական, ամոթխած փայփայանք, թուլական ժպիտ, անուշ գգվանք, ցավոտ հիացում, տխուր գգվանք, լուսե տանջանք, խորհրդավոր հրապուրանք եւ այլն:

Տերյանի բանաստեղծական խոսքին առանձին գունագեղություն ու բազմերանգություն են հաղորդում նույն իմաստային դաշտին պատկանող հոմանիշային շարքերով կազմված մակդիրային կապակցությունները: Բանաստեղծն օգտվում է հոմանիշների իմաստային ու արտահայտչական նրբություններից՝ հանդես բերելով լեզվական նուրբ ճաշակ ու բառի գեղագիտական արժեքի անսխալ զգացողություն: Տարբեր հոմանիշներով կազմված մակդիրային կապակցությունները Տերյանի բանաստեղծական խոսքն ազատում են միօրինակությունից, նույն բաձերդի անհարկի կրկնությունից, այն դարձնում սահուն ու թեթև: Այսպես օրինակ՝ դալուկ, գունատ, դալկադեմ, դժգունակ, հոմանիշային շարքերով կազմել է հետեւյալ մակդիրային կապակցությունները. գունատ դեմք, դալուկ աշուն, դալկադեմ կին, դժգույն կյանք, դժգունակ լույսեր, տխուր, տրտում, մռայլ, թախծոտ, տրտմաշուք հոմանիշներով՝ տրտում հեկեկանք, թախծոտ սիրտ, թախծալի աշուն, թախծոտ սեր, տխուր խոսքեր, մռայլ տանջանք, տրտմաշուք հուշեր . թուփչ, թուլական, կախարդիչ, կախարդական, հրապուրող, դուրսական, դուրսիչ հոմանիշներով՝ թուփչ կիսամութ, թուլական երագներ, կախարդական շղթա, հրապուրող շող, դուրսական խոսքեր եւ այլն. անգոր, տկար, անուժ հոմանիշներով՝ տկար հոգի, տկար հուզում, անուժ ցավ, անգոր հույս, թույլ ձեռիկներ:

Նկատենք, որ ոճական այս հնարքը Տերյանի բանաստեղծական խոսքի կարեւոր հատկանիշն է: Ըստ որում՝ բանաստեղծը, հաճախ չբավարարվելով լեզվում եղած հոմանիշներով, ինքն է ստեղծում իմաստով մոտ հոմանիշներ, որոնք իմաստային ընդհանրություններ ունենալով հոմանիշային շարքերի հետ՝ դրսևորում են բանաստեղծի գեղարվեստական մտածողության յուրահատկությունն ու ոճական ինքնատիպությունը: Այսպես, օրինակ, մութ բառին իջրել հոմանիշ Տերյանը կազմել է անլույսը (անլույս աշխարհում) («Ժամանակակից հայերենի բացատրական բառարանում» այս բառը կա, եւ միակ օրինակը բերված է Չարենցից. թող փափի իմ դեմ անլույս երեկո), աղոտ բառին իբրել հակառիշ՝ անաղոտը (լուռ դալկանում են երկնում անաղոտ): Նույն բառարանում եղած այս բառի միակ վկայությունը բերված է Տերյանից (վառում էիր քո լույսերն անաղոտ), մութին իբրել հակառիշ՝ անմութը (Դու անմութ աշխարհում ես ապրում): Բառարանում այս բառը կա երկու վկայություններով, որոնցից մեկը դարձյալ բերված է Տերյանից (վերը բերված օրինակը), իսկ մյուսը՝ Վահրամ Փափազյանից (անմութ գիշերների...): Տխուր բառին իբրել հոմանիշ կազմել է անխինդը՝ մակդիրային արժեքով (Երբ դառն օրերի անխինդ խոհերում...): Բառարանում բերված միակ օրինակը դարձյալ Տերյանից է, նույնը եւ անուրախ կազմությունը:

Առանց վարանելու կարելի է ասել, որ մակդիրային այս կապակցություններում ընդգծված մակդիրները բանաստեղծի կազմածներն են:

Տերյանը հաճախ կողք կողքի գործածում է նույն հոմանիշը՝ առաջ բերելով իմաստի ուժգնացում, կամ

գործածում է իմաստով հակադիր հոմանիշներ՝ ստեղծելով որոշակի տրամադրություն:

*Գրկեն վարդերս դալուկ, դժգունակ,-
Մեռնող վարդերս փայփայեն ու լամ... (հ. 1, 105):*

Կամ՝ *Իմ դժգույն կյանքի տխուր օրերում
Իր ցուքն է նետել քո հոգին պայծառ... (հ. 1, 167):*

Մակդիրների կիրառության մեջ նկատվում է մի հետաքրքրական երեւույթ. հաճախ Տերյանը նույն մակդիրը դնում է ամենատարբեր գոյականների վրա կամ, ընդհակառակն, նույն գոյականի հետ գործածում է ամենատարբեր մակդիրներ: Ոճական այս հնարանքը հնարավորություն է տալիս բանաստեղծին արտահայտել տարբեր պահերի իր տրամադրություններն ու զգացմունքները, միաժամանակ խոսքն ազատում է միօրինակությունից: Հասկանալի է, որ նույն մակդիրը տարբեր բառերի հետ գործածվելիս, տարբեր կապակցություններում, հեղինակային վերաբերմունքի տեսակետից, դրական կամ բացասական երանգ կարող է ստանալ: Բայց կարելու է այն է, որ ամեն դեպքում ընտրած մակդիրները բխում են բանաստեղծության բովանդակությունից ու ընդհանուր տրամադրությունից, համահնչյուն ու ներդաշնակ են դառնում նրա ընդհանուր ոճական հյուսվածքին: Այսպես, քնքուշ մակդիրով կազմել է հետեւյալ մակդիրային կապակցությունները. քնքուշ աստղեր, քնքուշ երեկո, քնքուշ խոսքեր, քնքուշ ձեռներ, քնքուշ լույս, քնքուշ երագ, քնքուշ սեր, քնքուշ խոսք, քնքուշ ժպիտ, քնքուշ դուրսանք, քնքուշ մութ, քնքուշ սուտ եւ այլն:

Ցուրտ մակդիրով՝ ցուրտ մշուշ, ցուրտ ցերեկներ, ցուրտ ցանկություն, ցուրտ մահիճ, ցուրտ ջրեր, ցուրտ աշխարհ: Հիվանդ մակդիրով՝ հիվանդ հոգի, հիվանդ սիրտ, հիվանդ դաշնակներ, նույնիսկ՝ հիվանդ քնքշություն ու հիվանդ թախիծ:

Տերյանի բանաստեղծական խոսքին բնորոշ մակդիրներից է նուրբը, որով եւս կազմված են բազմաթիվ մակդիրային կապակցություններ, ինչպես՝ նուրբ իրիկնաժամ, նուրբ երեկո, նուրբ մթնշաղ, նուրբ կարեկցություն, նուրբ հրաշք եւ այլն:

Տերյանը սիրտ, դաշտ, երեկո գոյականներով կազմել է մակդիրային տարբեր կապակցություններ: Նույն գոյականի վրա դնելով ամենատարբեր մակդիրներ՝ այն բնորոշում, բնութագրում է տարբեր կողմերով: Մակդիրային կապակցություններում տարբեր մակդիրների զուգորդություններով ստեղծվում են իմաստային նրբերանգներ, հայտնաբերվում են բնութագրվող առարկաների նոր հատկանիշներ: Այսպես, սիրտ, դաշտ, երեկո, *կյանք* գոյականներով կազմել է մակդիրային այսպիսի կապակցություններ՝ վիատ սիրտ, մեմավոր սիրտ, լքված սիրտ, հիվանդ սիրտ, հոգնատանջ սիրտ, տարագիր սիրտ, արձակ դաշտեր, դալուկ դաշտեր, խաղաղ դաշտեր, անծայր դաշտեր, անուշ դաշտեր, տխուր կյանք, սեւ կյանք, սուտ կյանք, խավար կյանք, դժգույն կյանք, դառը կյանք, երեկո գոյականի հետ՝ տխուր երեկո, քնքուշ երեկո, անուշ երեկո եւ այլն:

Հասկանալի է, որ մակդիրային այս կապակցությունները գեղարվեստական ու ոճական որոշակի արժեք են ստանում եւ համապատասխան տրամադրություն են ստեղծում միայն բառական միջավայրում, այլ բառերի հետ ունեցած կապակցությունների շնորհիվ (Դալուկ դաշտեր, մերկ անտառ... Արձակ դաշտերի ամայության մեջ նա մեղմ շշմջագ...):

Տերյանի գործածած մակդիրային կապակցությունների մեջ կան այնպիսիք, որոնք կազմված են իմաստային տեսակետից հակադիր բառերի զուգորդություններով, այսինքն՝ առարկաներն ու երեւույթները բնութագրվում են կապակցվող բառերի իմաստային հակադրություններով: Այդպիսի մակդիրները գրականագիտության մեջ ընդունված է կոչել օբյուսմորոն: Այս կարգի մակդիրներն իրենց անսովոր գործածություններով ուժեղացնում են խոսքի արտահայտչականությունը, կապակցվող միավորների միջեւ հայտնաբերում իմաստային նորանոր երանգներ եւ խոսքային միջավայրում դառնում հույզի, ապրումի դրսևորման անփոխարինելի միջոցներ՝ հեղինակային որոշակի վերաբերմունքով:

*Լապտերը միգոււմ մաղում է պաղ բոց,
Ես աննպատակ շրջում եմ անվերջ...(հ. 1, 65):*

Ընդգծված մակդիրը բնորոշում է քնարական հերոսի հուզապրումը:

Կամ՝ *Տանջիր ինձ վերջին քաղցր փանջանքով...
Այդ հուշերի մեջ կա մի քաղցր ցավ...*

Մակդիրային այսպիսի կապակցությունները Տերյանի բանաստեղծական խոսքում բավական լայն գործածություն ունեն. քաղցր վիշտ (Մի քաղցր վիշտ կա անդարձ անցածում...), անուշ տագնապ (Շուրջս վառված է մի անուշ տագնապ...), ցուրտ լույս (Միգոււմ շողաց մի ցուրտ լույս...), պայծառ վիշտ (Շուրջս փռիր քո վիշտը պայծառ...), անուշ թախիծ (Օրորում է ինձ մի անուշ թախիծ...):

Բանաստեղծական այս շողարձակումներն իրենց մեջ թաքցնում են քնարական հերոսի հուզապրումի չբացահայտված նրբերանգներ:

Տերյանի բանաստեղծական խոսքում համեմատաբար քիչ են փոխաբերական մակդիրները, բայց

դրանք եւս քնարական հերոսի հոգեվիճակն ու տրամադրություններն են արտահայտում: Ահա մի քանի օրինակ՝ հիվանդ քնքշություն, մեռնող ծաղիկ, սառած հեկեկանք: գունատ հույս, փափուկ քայլեր, տխուր ամպեր, սեւ կյանք, ցուրտ ցանկություն, մեռած լույսեր, երագուն երկինք, գունատ մահացող ծաղիկներ եւ այլն: Փոխաբերական մակդիրները բանաստեղծն ձեռք բերած նոր իմաստների շնորհիվ իրենց մեջ թաքցնում են արտահայտչական մեծ հնարավորություններ:

Մակդիրային կապակցությունների մեջ առանձնանում են գոյականով արտահայտված մակդիրները: Դրանք բնորոշ են նրանով, որ տվյալ գոյականի հիմնական հատկանիշով բնութագրվում է մակդիրային, իհարկե, փոխաբերական նշանակությամբ: Այսպես, օրինակ, արծաթ խոսքեր (Արծաթ խոսքերով աղբյուրն է խոսում...) նշանակում է արծաթի նման հնչուն խոսքեր, կամ անուրջ կույս (Ծաղիկների մեջ այդ անուրջ կույսի շուկը մնաց...), հեքիաթ աշխարհ (Հեքիաթ աշխարհում կլինենք մենակ...), ցավ կյանք (Ցավ կյանքի մեռնող լույսերից խաբված...) եւ այլն:

Գոյականով արտահայտված մակդիրների մեջ կան նաեւ սեռական հոլովով դրված մակդիրներ՝ խնդրյալն ցավ (եվ ես արքնացա խնդրյալն ցավից...), հիացմունքի շուկ (եւ լսում եմ հիացմունքի մի շուկ...), մահու գիշեր (Մահու գիշերն է մթնել իմ հոգում...), կարոտի կսկիծ (Միշտ նույն կարոտի կսկիծը պահած...), արեւածագի ցնծություն (Արեւածագի ցնծությամբ արբած...) եւ այլն: Զանի որ փոխաբերական մակդիրները հենվում են առարկաների միջեւ եղած զուգորդական նմանությունների վրա, ուստի պարունակում են թաքցված համեմատություն, եւ դրա շնորհիվ բնորոշումը դառնում է ավելի պատկերավոր ու տպավորիչ:

Նկատենք, որ գոյականով արտահայտված մակդիրների գործածության մեջ Տերյանը հանդես է բերում ինքնատիպ մոտեցում՝ խուսափելով նկարագրական տարրից: Նրա գործածած այս կարգի փոխաբերական մակդիրները մեծ մասամբ ունեն ածականական արժեք: Այսպես, անուրջ կույս-անքային կույս, հեքիաթ աշխարհ-հեքիաթային աշխարհ, ցնորք հուշեր-ցնորակն հուշեր, լույս փարոս-լուսավոր փարոս եւ այլն: (Հմմտ. արտույտ մանուկ, ծաղիկ տիրուհի):

Տերյանի լեզվական քննությունը ցույց է տալիս, որ նա հիմնականում գործածում է ածականով արտահայտված մակդիրներ, բայց, ինչպես վերելում տեսանք, կան նաեւ գոյականական մակդիրներ: Թեեւ քիչ, բայց հանդիպում ենք նաեւ դերբայական ձեւերով արտահայտված մակդիրների (հիմնականում հարակա-տար եւ ենթակայական), ինչպես՝ հրապուրող շող, ճառագայթող աչքեր, ցաված սիրտ, մոռացված երազներ, հեռացած խնդություն, մեռնող ծաղիկ, լքված հոգի, տանջող զգվանք, դուրսող հուզումներ, դալկացող ծաղիկներ, խոցող թուլանք, դուրսող խավ ար եւ այլն:

Տերյանի բանաստեղծական խոսքին բնորոշ չէ բարդ, բազմակի եւ բառակապակցություններով արտահայտված մակդիրների գործածությունը: Բանաստեղծը հիմնականում օգտագործում է մենադիր, պարզ մակդիրներ, որպեսզի չխախտի խոսքի սահունությունը, հստակությունը:

Բառակապակցություններով արտահայտված կամ բարդ մակդիրների գործածության առանձին օրինակների կարելի է հանդիպել միայն.

*Ինչպե՞ս չսիրեն-հեգությանը լցված
Դու յորեմապարիկ խոցված տիրամայր... (հ. 1, 237):*

*Վառիր երկունքի գիշերում խավար
Հրով մկրտված նաիրյան հոգին... (հ. 1, 237):*

*Այդ մութ ժխտում իմ սիրտն է մաշում
Մենակությունը հավիտյան խոցող... (հ. 1, 79):*

Ոչ մեծ գործածությամբ հանդիպող բարդ մակդիրները կազմված են Տերյանի բանաստեղծական լեզվին բնորոշ նրբությամբ ու ճաշակով եւ մասնակի բացառություններով դրանք իրենց բնույթով հիմնականում քնարական մակդիրներ են: Ահա մի քանի օրինակներ. *փխրահեծ* անձրեւ (Վշման *փխրահեծ* անձրեւի *հյուս* ուրվագծեր (Սքնշաղի ուրվագծեր *նրբահյուս*), *արյունալեն* ցանկություն (Ցանկությունով արյունավշի *վշտակիր* հոգի, *սրբամոր* գիրկ, *ուկեցություն* հայացք, *փխրաբույ* հուր, *մեղմախոս* առու, *փխրադալուկ* դեմք, *ուկեպայծառ* մշուշ եւ այլն:

Իսկ բազմակի մակդիրները մեծ մասամբ հանդես են գալիս հետադաս կիրառությամբ, մի հանգամանք, որն իր հերթին նպաստում է խոսքի արտահայտչականությանը: Շրջում շարադասությունը ընդգծում է մակդիրի իմաստային կողմը, եւ այն տրամաբանական շեշտի շնորհիվ բանաստեղծական խոսքում ձեռք է բերում արտահայտչական նրբություն:

*Իմ օրեր անհատկում, անխնայում եւ անպտուկ,
Ցնորքներ լուսավառ, ընդունալն ապարդյուն,
Մոռացված է հավետ արեւոտ ծեր ուղին (հ. 1, 141):*

ԵՆԹԱԿԱՅԻ ԵՎ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՁԵՂՉՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՐԱԲԱՐՈՒՄ ԵՎ ՆՐԱ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՓՈՐՁ

Է. Ս. ՄԿՐՏՅԱՆ

Խոսքի մեջ զեղչման բազմազան հնարավորություններ կան, եւ լեզվական բոլոր միավորները կարող են զեղչվել: Այդ երեւոյթը դեռեւս նկատել են գրաբարի քերականները:

Գ. Ավետիքյանը զեղչումը բացատրում է հունարեն *էլլիփսիս* «պակասումն» բառով. «յորժամ *գիր* ինչ կամ *բառ* թողեալ է, բայց լռելեայն կամ զօրութեամբ իմանի. զօր. յորժամ պակասի *նախդիրն* կամ *բայն*, կամ *դէր* բային, *յարկացեալն*, կամ *գոյականն*, կամ *նախադրութիւն* եւլն» (ընդգծումները մերն են. - Է. Ս.): Ըստ հեղինակի՝ հնչյունական, բառական, ձեւաբանական, շարահյուսական եւ այլ միավորներ կարող են զեղչվել:

Ա. Բագրատունին եւս նույնպիսի կարծիք է հայտնում: Նա նշում է, որ խոսքի մեջ զեղչումը կատարվում է համառոտության, վայելչության կրճատման, ինչ-որ բանի լռությանը հասկանալու համար՝ «զանց առնելով *գիր* ինչ կամ *բառ* կամ *մասն բառի*, որ ինքնին դիրաւ իմանի զօրութեամբ ի թաքնութեան անդ. որպիսի էր *բայն* եւ *որ դերանուն, սեռի խնդիր բային, միջակ անուն կամ խնդիր նորա, յարկացեալն, գոյականն ընդ ածականաւ, յարաբերելի դերանունն, դիմորոշ յողն առ բազում անուանաւ, նախդիր կրկնեալ հորովից եւ այլոց*, եւլն» (ընդգծումները մերն են, բացի որ դերանունից. - Է. Ս.): Եվ բազմաթիվ փաստերով ներկայացնում է նախադասության անդամների, հոդերի, այլեւայլ բառերի, կապակցությունների զեղչման դեպքերը:

Վ. Չալքիյանը այս հարցում չի ծավալվում. առանց մանրամասն մեկնաբանությունների վկայում է լեզվական տարբեր միավորների ու կառույցների վերաբերող օրինակներ:

Արդի հայերենի քերականները, օգտագործելով անցյալի քերականների (հատկապես Ա. Բագրատունու) եւ ժամանակակիցների ուսումնասիրությունները, մանրամասն շարադրում են գլխավոր եւ երկրորդական անդամների, թերի նախադասության հետ կապված այլեւայլ բառերի, արտահայտությունների զեղչման դեպքերը:

Սույն ուսումնասիրությամբ մեր խնդիրը ոչ այնքան գրաբարում ենթակայի եւ ստորոգյալի զեղչման դեպքերի հաջորդական շարադրումն է, որքան *նրանց զեղչման հիմունքների որոնումը*: Իսկ դա իրագործելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ գրաբարի նախադասության կառուցվածքային առանձնահատկությունները (անորոշ եւ անցյալ դերբայներով կազմված նախադասություններ. թեք հոլովներով ենթակայով եւ համապատասխան ստորոգյալներով կառույցներ. անվանական, թերի նախադասություններ եւ այլն):

Ենթական եւ ստորոգյալը «մտնում են նախադասության կառուցվածքային հիմքի մեջ, հետեւաբար, միջուկային միավորներ են կամ միջուկներ, որոնք հավասարապես ենթադրում են մեկը մյուսի առկայությունը» (ընդգծումը մերն է. - Է. Ս.):

Հիրավի, ենթականի առկայությամբ ենթադրվում է զեղչված ստորոգյալը, ինչպես նաեւ՝ հակառակը: Բայց սա հեշտ իրագործելի կլիներ, եթե նախադասությունը կառուցվածքային բազմազանություններ եւ առանձնահատկություններ չունենար:

Ուրեմն ընդգծենք գլխավորն ու ելակետայինը. բավական է ստույգ իմանալ ենթականի եւ ստորոգյալի գործառնությունները, հեշտ եւ դյուրին կլինի ցույց տալ նրանց հետ առնչվող առանձնահատկությունները, լրացական կապերն ու դրսեւորումները: Այժմ դիմենք փաստերի, ապա կատարենք համապատասխան բացատրություններ եւ եզրակացություններ: Այսպես՝

1. Եւ *վերանալն* եւ *բարձրանալն* զի էջ ի խոնարհութիւն մարմնովն. վասն այնորիկ նորին խոնարհութեան մարմնոյն կերպարանօք բարձրանայ (Ազ., 226): 2. Այլ ինքն է պատճառ ամենայնի, որ ի լինելն եւ ի գոյանալ եկին ի չգոյէ եւ ի գոյէ. *որպէս երկինք վերինք* եւ *որ ինչ յերկինս*, եւ *երկինք երեւելիք որ ի ջուրք*, եւ *երկիր*, եւ *ամենայն ի անան* եւ *ի անա. յորմէ ամենայն*, եւ *ինքն ոչ յունեքէ* (Եզն., 6): 3. Զանգի ոչ եթէ կառօտ ինչ ոք իւրք էր, եթէ վասն այնորիկ խնայիցէ՝ իւր միայն սեպիականեալ զկենդանութիւնն. եւ *անգոր* եւ *դկար*, եթէ զանծին եւեթ պահիցէ զզօրութիւնն. եւ *ոչ անուագ ի գիպութեանէ*, եթէ ինքեան եւեթ պահիցէ զգիտութիւնն. եւ *ոչ կարօք յիմաստութեանէ*, եթէ յորժամ այլոց բաշխիցէ զիմաստութիւնն իւր. կարծիք ինչ կատարութեան ի ներքս մտանիցեն (անդ., 8): 4. Ոչ սկիզբն առեալ յունեքէ լինել Աստուած, *այլ ինքն ինքեանմէ մշտնջենաւոր. ոչ ի փեղուք ուրեք*, *այլ ինքն ինքեան փեղի. ոչ ի ժամանակի իմիք*, *այլ ժամանակք ի նմանէ գոյացան*. եւ *ոչ միայն քան զերկինս երկցագոյն*, *այլ եւ քան* զկարծիս մտաց մարդկան եւ իրեշտակաց (Ե., 58-60):